«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
ԽՈՐՀՈՒՐԴ

"20" սեպտեմբերի 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 155-Լ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ

1. Մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով:
2. Հաստատել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, արժեկտրոնների վճարման և մարման կարգն ու պայմանները՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելվածի:
3. Հանձնարարել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Գործադիր տնօրեն Լուիզա Իգրարյանին կատարել անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման ու ցուցակման կազմակերպչական աշխատանքները, մասնավորապես՝
   - կազմակերպել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության հետ «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման» պայմանագրերի կնքումը,
   - բանակցել և կնքել պարտատոմսերի լավագույն ջանքերի սկզբունքով չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների մատուցման պայմանագիր,
   - ապահովել պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով ցուցակման հայտի ներկայացումը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Էդուարդ Մարության**

20 սեպտեմբերի 2017թ.
ժամը 16:00
ք.Երևան